



Միսաք Մեծարեւելց

Մթնշաղներ

Վերջալոյսի աղջիկն է իր կուսութեան մէջ քրքում.
Ինչո՞ւ մինակ մընացի երագիս հետ թախծագին.
Թմբիններու բոյրին տակ, նուրիներու ծաղիկին՝
Ա՛հ, ինչո՞ւ ես մընացի գիրկն երագին այս տրտում:

Ո՛վ դուն հիրիկ ծաղկանոյշ, երբ անցար հետ լոյսերուն,
Բան մը փլաւ հոգւոյս մէջ քայքայումով ողբագին,
Դարձիր քի՛շ մըն ալ Ժպտէ սա լուսաբաղձ հիւանդին՝
Որ քիշ առ քիշ կը մեռնի՛ր կառչած իր խօլ յոյսերուն...:

Մութը կ'իջնէ հոգւո՛յս՝ ուր վաղո՛ւց գիշեր է արդէն.
Ըսպասումի՛ր ցայգ՝ ուր դեռ շողաց լո՛յսն երագին.
Հագիւ քիշ մը բոյր ծըծած մոռացումին ես վարդէն
Նորէն քեզի՛ր կը դառնամ, ա՛կն արեւիս ոսկեծին:

Լուսնի պայծառ տիւին տակ պիտի համրեմ անդադար,
Բուստէ զարկերն ոգետր՝ առոյգ սիրոյ երագին.
Ա՛հ, քիշ մը լո՛յս, Ժըպի՛տ մը՝ որ կեա՛նք ինծի պիտի տար,
Եւ փարատէր լըքումն՝ որ կը ծանրանայ իմ ուսին:

Եկո՛ւր, արդէն կը մըսի՛ն հեզ երագներն իմ որբուկ,
Ա՛լ յոգնած եմ անցնելէն կածաններէ մենաւոր,
Անձրեւ կ'իջնէ հոգւոյս մէջ, կը զգամ մահուան սրսըփութ,

Ձեռքս է պարապ մընացեր դատարկին մէջ սրգաւոր: